ԿԱՐԾԻՔ

Նանե Արտակի Զեյնալյանի՝ «Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ Հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսական հիմնախնդիրը խիստ արդիական է.հայաստանյան հասարակությունը (այդ թվում՝ արցախահայությունը) ներգրավված է տեղեկատվական-հոգեբանական պատերազմում, որի մշտական իրականացմանը հակառակորդն ուղղորդել է տարբեր ինտենսիվության ռազմական գործողություններ, այդ թվում՝ 2016թ-ի ապրիլյան քառօրյա, և 2020թ-ի քառասունչորսօրյա պատերազմները: Տեղեկատվահոգեբանական պատերազմների արդյունավետությունը հիմնավորված է ինչպես համապատասխան ուսումնասիրություններում, այնպես էլ արդի հակամարտությունների ելքերով: Համապատասխանաբար, անձի վրա տեղեկատվական-հոգեբանական պատերազմների ընթացքում հոգեբանական ազդեցության չափման և հնարավոր հետևանքների, այդ թվում՝ արժեհամակարգի բաղադրատարրերի մակարդակում դուրսբերման խնդիրն ունի ինչպես տեսամեթոդական, այնպես էլ խիստ կարևոր կիրառական նշանակություն:

Ատենախոսական աշխատանքի ուժեղ կողմերից են ենթագլուխ 1.1. Անձի արժեհամակարգի ձևավորման հոգեբանական հիմքերը և նախադրյալները, մեթոդական մասում մի քանի մեթոդների համակցումը, այդ թվում՝ փորձագիտական հարցման, կոնտենտ վերլուծության, ազատ ասոցիացիաների մեթոդի, հարցաթերթիկային հարցման և հոգեբանական թեստավորման մի քանի տեխնիկաների: Բացի այդ, կարևոր ենք համարում պաշտպանության ներկայացված դրույթներն առ այն, որ հակառակորդի հետ շփման գոտում որպես կարևոր արժեք է հանդես գալիս անվտանգությունը, ինչը շփման գոտուց դուրս բնակվողների շրջանում բացակայում է առաջին եռյակից, և եզրակացություններ՝ անձի արժեհամակարգի, կյանքի նպատակների ձևավորման և էքզիստենցիալության միջև կապերի վերաբերյալ: Բացի այդ, գնահատելի է նաև ատենախոսության ձևավորման, այդ թվում՝ գծապատկերների լայն օգտագործման, հավելվածներում օգտագործված գործիքների պատշաճ ներկայացման մոտեցումը:

Միևնույն ժամանակ, ատենախոսության տեսական և հետազոտական մասերի վերաբերյալ առկա են դիտողություններ, այդ թվում.

1. Դիտողությունը վերաբերում է ատենախոսության թեմայի, նորույթի, և, մյուս կողմից, հետազոտության օբյեկտի միայն մասնակի համապատասխանությանը: Այսպես, և՛ ատենախոսության վերնագիրը, և նորույթը, մասնավորապես՝ «պատերազմական և

ոչ պատերազմական պայմաններում բնակվող անձանց արժեհամակարգի առանձնահատկությունների դրսևորման տարբերությունները, անձի արժեքների հիերարխիկ տարբերությունները» (Ատենախոսություն, էջ 10) միայն մասամբ են բացահայտվում հետազոտության ընտրված օբյեկտի՝ երիտասարդության օրինակով: Չի բացառվում, որ տարիքային այլ խմբերի պարագայում այլ արդյունքներ ստացվեին, ուստի հետազոտության համար անհրաժեշտ էր որոշակի համաչափությամբ ընտրել բոլոր տարիքային խմբերի ներկայացուցիչներին, կամ էլ նեղացնել ներկայացվող գիտական նորույթն ու եզրակացությունները՝ խոսելով միայն երիտասարդների արժեհամակարգի առանձնահատկությունների մասին:

2. Երիտասարդությանը հեղինակն անվանում է «հասարակության ստվար զանգված» (Ատենախոսություն, էջ 49), մինչդեռ դա սոցիալական խումբ է: Ընտրվել են 18-25 տարեկան երիտասարդներ (Ատենախոսություն, էջ 45), մինչդեռ երիտասարդությունը Հայաստանում սահմանվում է որպես 16-30 տարեկան սոցիալական խումբ (տե՛ս, օրինակ□ՀՀ Կառավարության՝ Երիտասարդական պետական քաղաքականության միջոցառումների հաստատման վերաբերյալ): Ի՞նչ սկզբունքով է սահմանափակվել հարցվողների խումբը:
3. Հեղինակն իր մեթոդական մասում օգտագործում է «հարցարան» հասկացությունը՝ մի դեպքում խոսելով բաց և փակ հարցերի մասին, մյուս դեպքում՝ արձի արժեհամակարգի բացահայտման Շվարցի թեսթի: Առաջարկում ենք հետագայում «հարցարան» անորոշ հասկացության փոխարեն օգտագործել հստակ սահմանումներ ունեցող «հարցաթերթ», «հարցաշար» և թեսթ հասկացությունները, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է հետազոտության կոնկրետ նպատակներին:
4. Տեսական մասում «տեղեկատվական» (ինչպես գրում է հեղինակը՝ «տեղեկութային») և «հոգեբանական» պատերազմի սահմանումների միջև հարաբերակցությունն անհստակ է. մի կողմից, հեղինակը բերում է որոշ գիտականների մոտեցումներ, որոնց համաձայն տեղեկատվական պատերազմն ավելի լայն երևույթ է և ներառում է հոգեբանական գործողություններ, մյուս կողմից, պնդում է, որ «հոգեբանական պատերազմը առավել լայն է և ընդգրկում է նաև տեղեկութային պայքարը՝ որպես ազդեցության բաղադրիչ» (Ատենախոսություն, էջ 31): Գրականության մեջ առկա է նաև «տեղեկատվական-հոգեբանական» պատերազմ հասկացությունը, որին հեղինակը չի անդրադարձել: Կարծում ենք, հեղինակի պնդումը, թե հոգեբանական պատերազմ հասկացությունն ավելի լայն է, քան տեղեկատվական պատերազմը, բխում է հեղինակի մասնագիտական տիրույթից, սակայն օբվեկտիվորեն «տեղեկատվական պատերազմ» երևույթն է ավելի ընդգրկուն, քանի որ, մասնավորապես, նաև ներառում է տեղեկատվական-տեխնիկական կողմը. հաքերական պայքարը, տեղեկատվության տեխնիկական կրիչների չեզոքացումն ու ծառայեցումը սեփական նպատակներին, և այլն (կիբերպատերազմը՝ որպես

տեղեկատվական պատերազմի տարատեսակ), այսինքն՝ ոչ հոգեբանական բաղադրիչը, որը նույնպես կարող է ունենալ հոգեբանական հետևանքներ:

Բացի այդ, «տեղեկատվական պատերազմ» հասկացությունը կիրառվում է մակրոմակարդակում և կապված է պետության տեղեկատվական անվտանգության հետ, մինչդեռ «հոգեբանական պատերազմը»՝ հասարակության, խմբի և անձի հոգեկան առողջության ու կայունությանն ուղղված սպառնալիքների հետ: Այս տարբերակումը նույնպես կնպաստեր աշխատանքում տվյալ եզրույթների սահմանման և կիրառման հստակությանը:

Վերջապես, աշխատանքում խիստ ցանկալի կլիներ հենց Ղարաբաղյան հակամարտության պայմաններում տեղեկատվական պատերազմի ուսումնասիրություններին ուղղված հետազոտությունների ներառումն ու քննարկումը, օրինակ.

- Հարությունյան Գ., Ժամակոչյան Ա., Աթանեսյան Ա., և այլք, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը: Ե., "Նորավանք", 2009:
- Աթանեսյան, Ա. Համացանցը որպես ԼՂՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ: «21-րդ ԴԱՐ», 2013, թիվ 6 (52), 35-61 էջ:
- ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ /Գ. Հարությունյանի խմբ./: Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2017, 320 էջ:

5. Հետազոտության ընտրանքին ուղղված դիտողությունները.

- Խմբերի ընտրության համար հիմք է ծառայել շփման գոտուց հեռավորությունը (Ատենախոսություն, էջ 45): Հաշվի առնելով, որ քառօրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի հարձակումն իրականացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի ողջ երկայնքով, ապա դրանից ինչպիսի՞ հեռացվածություն է հաշվարկել ատենախոսը, որպեսզի ստանա ընտրանքի գլխավոր համախմբությունը, ո՞ր բնակավայրերից է ընտրել հարցվածներին: Ատենախոսության մեջ այդ կարևոր տվյալները բացակայում են:
- Ինչու՞ է մի դեպքում գլխավոր համախմբությունը հաշվարկվել 202 հոգուց, մյուս դեպքում՝ 100, և որո՞նք են այդ սոցիալական խմբերը, ինչպե՞ս են բաշխված ըստ բնակավայրերի (Ատենախոսություն, էջ 45, 46): Կարելի է ենթադրել, որ ավելի մեծ ընտրանքային համախմբությունը՝ 100 հարցվող, վերաբերում է Հայաստանի սահմանամերձ տարածքին, իսկ 40 հոգին՝ Արցախի: Սակայն, հարցվողների ո՞ր մասն է ընտրվել հենց սահմանամերձ բնակավայրերից, իսկ որը՝ սահմանից հեռացված (աշխատանքից չի երևում

նաև, թե ինչպիսի՞ հեռացվածությունն է հեղինակը համարում անհրաժեշտ՝ իր վարկածը ստուգելու և ընկալումների տարբերությունը չափելու նպատակով):

6. Որպես կոնտենտ-վերլուծության ենթարկված ադրբեջանական լրատվական երկու կայքերից մեկը՝ էջ 61-ում նշվում է day.az, իսկ էջ 62-ում՝ vesti.az կայքէջը: Ո՞րն է իրականում վերլուծվել:
7. Կոնտենտ-վերլուծության արդյունքներից մեկն այն է, որ «հայկական լրատվամիջոցների աշխատանքի մարտավարությունն արդյունավետ է հասարակության ոչ բոլոր խմբերի համար»: Հարց է առաջանում. իսկ արդյո՞ք հայկական լրատվամիջոցներն առհասարակ ունեն հասարակության հետ տեղեկատվական-հոգեբանական աշխատանքի կանոնակարգված մարտավարություն և առավելևս ռազմավարություն: Ստացված եզրակացությունները ճշգրտելու համար ընտրված փորձագետների շարքում անհրաժեշտ էր ընդգրկել նաև հայաստանյան լրատվամիջոցների ղեկավարներին և կամ հակամարտության լուսաբանման ոլորտում մասնագիտացած լրագրողներին:
8. Այս իմաստով ատենախոսին նաև խորհուրդ կտայինք Հայաստանի և Արցախի երիտասարդներից հարցնել, թե ի՞նչ նպատակով են այցելում ադրբեջանական լրատվական կայքեր. համեմատելու հայկականների հե՞տ, հայկականներին չվստահելու պատճառո՞վ, պատրաստվելու ադրբեջանական քարոզչությանն ու դիմադրողականություն ձեռք բերելու՞, ա՞յլ: Այս ամենը կնպաստեր հեղինակի կողմից դրված նպատակների իրացմանը, նաև՝ ընտրված մեթոդների փոխլրացմանը, ինչը աշխատանքում միշտ չէ որ ապահովվում է:
9. Ատենախոսության մեջ չգտա կարևոր հարցի պատասխանը. ինչպե՞ս է ազդել տեղեկատվահոգեբանական պատերազմը 2016թ. քառօրյա պատերազմի ընթացքում հարցվածների վրա՝ համեմատած առհասարակ ղարաբաղյան հակամարտության ամբողջ ընթացքում իրականացված տեղեկատվահոգեբանական պատերազմի ազդեցության հետ: Գրանցվե՞լ են արդյոք ազդեցության առանձնահատուկ միտումներ հենց քառօրյա պատերազմի ընթացքում, որոնք չեն եղել կամ պակաս կերպով են դրսևորվել մինչ այդ կամ դրանից հետո: Ինչպե՞ս գնահատենք ՀՀ-ի և ԼՂՀ-ի բնակիչներին ուղղված տեղեկատվահոգեբանական ազդեցությունը հակամարտության հարաբերականորեն խաղաղ և պատերազմական պայմաններում:
10. Աշխատանքի թույլ կողմերից մեկն է տեղեկատվահոգեբանական պատերազմի հանգեցումը առցանց մամուլին, մինչդեռ այդ ազդեցությունը երիտասարդների պարագայում իրականացվել է նաև ընտանեկան շփման և պատմությունների (պատերազմին մասնակցած հարազատների իրական պատմություններ), դպրոցական դասընթացների և քննարկումների, միջանձնային և համայնքային

շփումների պարագայում, և չի բացառվում, որ հենց այդպիսի ազդեցությունն է եղել որոշիչ, և ոչ թե՝ առցանց լրատվամիջոցների սպառումը:

11. Որպես ատենախոսության կիրառական նշանակություն՝ նշվում է հետազոտության արդյունքների կիրառելիությունը «հոգեթերապևտիկ աշխատանքներում և պատերազմի մասնակիցների հետ իրականացվող հոգեվերականգնողական աշխատանքներում»: Կիրառե՞լ է արդյոք հեղինակը իր ստացված եզրակացությունները ներկայիս պատերազմանակ և հետպատերազմական իրավիճակներում, մասնավորապես՝ վիրավորների, պատերազմի վետերանների հետ հոգեթերապևտիկ աշխատանքում, և եթե այո, ապա ի՞նչ եզրակացությունների կարելի է գալ նոր փորձի հաշվարկմամբ:

Այնուամենայնիվ, ատենախոսության մեջ կարևոր ոլորտային հիմնախնդիրների բարձրացումը և ուսումնասիրությունը, դրանց լուծմանն ուղղված մասնագիտական ջանքերն ու կիրառված մոտեցումները, ստացված արդյունքներն ու եզրակացությունները հիմք են՝ կատարված աշխատանքի գնահատման համար: Բացի այդ, հեղինակի կողմից հրատարակված ինը գիտական հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այսպիսով՝ ատենախոսության մեջ արծարծվող հիմնախնդիրների վերլուծության և լուծման կարևորությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոս Ն.Ա. Ձեյնալյանը՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Արթուր Վլադիմիրի Աթանեսյան
քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի
Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

23.11.2020 թ.

Քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Վ. Աթանեսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Գիտական քարտուղար
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Լ.Ս. Հովսեփյան